ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2026թվականի N 014

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի« 2-րդ ենթակետով,ՀՀ Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով.

1.Հաստատել Ֆիոլետովո համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.137621 հա մակերեսով, 06-113-0008-0014 կադաստրային ծածկագրով և 0.099 հա մակերեսով, 06-113-0008-0016 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի հասարակական կառուցապտման հողամասերը մեկ գույքային միավոր:

2.Միավորված անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ Ֆիոլետովո համայնք, 2-րդ փողոց, 44/1 հողամաս հասցե:

3. Սույն որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ալեքսեյ Չիչյով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2026թվականի N 015

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Ֆիոլետով համայնքի գլխավոր հատակագիծը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի միկրոռեգիոնալ մակարդակի հսմսկցված տարածական պլանավորման փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 13 մարտի 2025 թ. թիվ 130-Ա որոշումը, Ֆիոլետովո համայնքի ավագանու 27 սեպտեմբերի 2024 թվականի N 28-Ա որոշումը

1.Ֆիոլետովո համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0108-0215 ծածկագրով 0.18324 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի հողամասի նպատակային նշանակությունը, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՉԻՉՅՈՎ